

4868

55

2-94

2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՐԿՐԱԲՆԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԱՆ
ՅԵՐԿՐԱՉԱՐԺԱԼՈՒՆ Բաժանմունք.

55
2-94

ՀՐԱՅԱՆԳ

յԵՐԿՐԱՉԱՐԺԵՐԸ ՊԻՄԵԼՈւ ՀԱՄԱՐ

(Խուսերենից թարգմանեց Յ. Ա. ՌԴԱՆՅԱՆ)

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տաղապան-վիճակը. Ա. Խ. Ա. Ֆ. Հ. Յերկաթուղ. Կառավարության.
1926 թ.

2002

Աշխարհիս վրա իրենց յերկրաշարժական գործունեությամբ հայտնի յերկրների մեջ կովկասը նշանավոր տեղ է բռնություն 30 տարիների ընթացքում կործանվեցին Ախալքալաքը, Շամախին և Գորին։ Այն թույլ շարժեցը, վորոնք յերբեմն ցնցում են մի քանի տասնյակ հազար քիլոմետր տարածություն և վորոնք զգալի են ամբողջ Վրաստանում և յաճախ նույն իսկ ամբողջ Կովկասում, նկատելի են ամեն տարի և մեծ մասամբ դրի են առնվում բաղմաթիվ շարժագիրների (սեյսմոգրաֆ) միջոցով, վորոնք ըմբանում են մարդկային զգայարանքներին անմիջակա անմատչելի գետնի ամենամեծույթ ցնցումները։

Զնայելով կովկասյան յերկրաշարժերի այդ համեմատական դորեղությանն ու յաճախությանը, նրանք դեռ ևս ինչպես հարկն ե, ուսումնասիրված չեն։ Յերկրաշարժերն ուսումնասիրող գիտությունը, շարժագրությունը, նոր գիտություն ե, սիստեմատիկ գիտողությունները գեռ ևս մեզնից այնքան աննշան ժամանակ են խլում, վոր գրանց հիման վրա անհնար ե յեղրակացություններ անելը։ Մեզ դեռ ևս հաստատ հայտնի չե, թե վորտեղ են գանվում յերկրաշարժի բները (օգագի), թե ժամանակի ընթացքում նրանք վորտեղ են տեղափոխվում, թե յերկրաշարժերն ինչ յերկրաբնաբանական գործոններից ու պայմաններից են կախված, նրանց պարբերականությունը (յեթե դա գոյություն ունի) ևն։

Այս տեղեկություններն անհրաժեշտ են վոչ միայն տեսաբանության համար, նրանք մեծ նշանակություն ունեն ապագայում պրակտիկայի համար։ Անհանգիստ և գտանգավոր շրջաններն ու վայրերը ճանաչելը կարևոր են առև տեսեսական կողմից։ Թեպետ մարդու չե կարող փոփոխել տեկտոնական գործողությունների բնական և անշեղ ընթացքն, այնու ամենայնիվ նա վորոշեալ յերեսոյթներ նկատելիս կարող ե ազատել թե իր կեանքը վտանգից և թե կործակարսություն ու կործանվելուց, վնասները հասցնե-

Տպագրված և Դիտարականի Գիտական Խորհրդի կարգավորությամբ

Խորհրդի նախագահ

Տեսչի պաշտոնակատար Մ. Սողիան

7282-57



լով աննշան չափերից վերջինս պահանջում է ժողովրդի և
յերկրի բարորությունը:

Պետք է մատնանշել մի հանգամանք ևս Գիտությու-
նը ներկալիս հնարավորություն չունի յերկաշարժերը
գուշակելու և սա վոչ թե այն պատճառով, վոր այդ
պրոբեման ընդհանրապես անիրազործելի է: Շարժագի-
տական նորագումն էտագոտությունները մեզ համոզում
են, վոր ապագայում գիտական հիմունքներով վորոշեալ
գեպքերում հնարավոր կինի գուշակել շրջանային յեր-
կրաշարժերը: Սակայն այս հնարավորությունը ձեռք բե-
րելու համար անհրաժեշտ է ունենալ գիտողությունների
շատ մեծ պաշար, վոր վերաբերի վոչ միայն հենց յեր-
կրաշարժերին, այլ և նրանց նախորդող և հաջորդող ֆիզի-
քական յերևույթներին:

Վրաստանի Յերկրաբնարանական Դիտարանի Յերկրա-
շարժական Բաժանմունքի նպատակներից մեկն ել յերկի-
րը շարժագիտական կողմից ուսումնասիրելն է: Գետնի
վոչ մի տատանումն, յերկրաշարժի հետ կապված վոչ մի
յերեսույթ չպետք է խուսափի նրա ուշադրությունից: Յեր-
կրաշարժական Բաժանմունքի համար կարեոր ե տեղե-
կություններ ունենալ այն բոլոր վայրերից, ուր նկատ-
վել ե վորոշեալ յերկրաշարժ և նույնչափ ել կարեոր ե
խմանալ, թե դա վորտեղ չե գիտվել: Սակայն բոլոր գի-
տողություններն ել միատես արժեք չունեն: Նրանց
արժեքը կախված են նրանից, թե դիտողությունները կա-
տարելիս ինչ չափով են գործադրվել են վորոշյալ պար-
մանները:

Ստորև առաջ են բերվում ցուցույններ այն մասին, թե
յերկրաշարժերի ժամանակ ինչ յերեսույթների վրա ունիու-
ուշագրություն դարձնել և թե նրանք ինչպես պիտի գրի
առնել:

Յերկրաշարժական Բաժանմունքի
վարիչ ՅԱԳԵՆԻ ԲՈՐԱ.

ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ՀԱՐՑԵՐԸ

1. Յերկրաշարժը նկատվել է
2. Շաբաթվա որը, ամիսը, ամսաթիվը, տարին . .
3. Յերկրաշարժը տեղի է ունեցել կեսօրից առաջ,
կեսօրից յետո ժամին ըոպեին
4. Ժամացույցը յերբ և ինչպես եր ստուգված . . .
5. Յերկրաշարժի բնույթը (հարված կամ գետնի ալի-
քածել յերերումն, գետնի գողգողալը)
6. Յեթե հարված եր՝ ցույց տալ ուղղությունը . .
7. Յերկրաշարժի անողությունը
8. Յերկրաշարժի միջոցին գիտողը վորտեղ եր գլու-
նվում բաց ողում, թե շինության մեջ
9. Յեթե շինության մեջ եր, ցույց տալ հարկը (մա-
ռանում, ներքեմի կամ վերևի հարկում)
10. Արդյոք գիտողը յերկրաշարժը նկատելի է հան-
գիստ գրության մեջ՝ թե մանգալիս
11. Դիտողն ստորև առաջ բերված յերեվույթներից
գորոնք ե նկատել.

գոների ու լուսամուտների ցնցումն, գերանների ձըռ-
ձուալը, կախված իրերի ուժեղ կամ թույլ ճոճվելը, գոների
փակվելը, պատի ժամացույցի կանգնելը, տնային զան-
գակների ընդընդապալը, սենյակներում իրերի թոթափվելը,
ծեփի թափվելը

12. Յեթե նկատված են շինությունների վնասներ,
ցույց տալ.

ա) վնասների բնույթը՝ պատերի ճաքելը, քիրամիդ-
ների թափվելը, ծինելույզների խորտակվելը, աների ամ-
բողջովին կամ մասնակի կործանվելը

բ) գիտողի ապրած վայրում վնասված տների թիվը
(շատ տներ են վնասված թե քիչ)

- գ) ինչ շինություններ են մշասված (հյուղեր, քարե, փայտե, նոր, հին)
13. Արդյոք յերկրաշարժն ուրիշներն ել են նկատել .
14. Յեթե նկատել են, արդյոք նրանք այդ ժամանակ տան են յեղել, թե փողոցում
15. Արդյոք յերկրաշարժն ամբողջ բնակչությունն ել նկատել ե
16. Արդյոք խուճապ առաջացել ե
17. Արդյոք մարդկային զոհեր յեղել են
18. Արդյոք գետնում ճեղքեր առաջացել են, ժայռեր տապալվել են, լեռներից քարեր թափվել են, սույզեր (օպօլզի) գոյացել են
19. Արդյոք նկատվել ե վորև փոփոխություն ջըրհորներում և աղբյուրներում (ջրի քանակության, ջերմության, համի, հոտի և գույնի փոփոխություն)
20. Արդյոք յերկրաշարժից առաջ, ինչպես և նրանից յետո լսելի եին գրգռոց ու թնդյուն
21. Դիտողի հասցեն ու ստորագրությունը
- Տեղեկությունները հարցաթերթում պիտի գրել դիտելուց անմիջապես յետո՝ անցկացածի թարմ տպավորության տակ:

Ամեն մի շարժ (հարված), ինչքան ել նա թույլ լինի, գրվում և առանձին հարցաթերթում, նույն իսկ յեթե այդ հարվածները միևնույն որը պատահած լինեն մի քանի անդամ:

Սովորաբար գլխավոր հարվածին հաջորդող ավելի թույլ հարվածների վրա քիչ ուշադրություն են դարձնում, դրանք աննշան համարելով: Սա սխալ է, վորովհետև դիտական տեսակետից բոլոր հարվածներն ել միատեսակ կարևորություն ունեն և պահանջում են, վոր նրանց վրա հավասար ուշադրություն դարձնվի:

Հարցաթերթերում գրվում են անձնական դիտողությունները, իսկ յեթե մի քանի տեղեկություններ հա-

զորդվում են ուրիշի պատմածներից, այն ժամանակ դա հիշատակվում ե առանձին:

Հարցաթերթի հարցերից շատերը պահանջում են ամենահակիրճ պատասխան—այս, վոչ: Այն գեղքում, յերբ հարցը պարունակում ե մի շարք յերեսությներ, ընդունվում ե հարցում հիշատակված այն յերեսութը, վորը դիտվել ե: Յետե դիտողը վորեւ հարցի պատասխանի վերաբերմամբ տարակուսում ե, այն ժամանակ ավելի լավ ե այդ հարցին չպատասխանել:

Զափազանց ցանկալի ե մի քանի հարցերի վերաբերմամբ ավելի մանրամասն պատասխաններ ստանալը: Էթե դիտողի համար գժվար չե այդ պատասխանները տալը, այն ժամանակ հնդրում ենք, վոր դրանք հաղորդվեն առանձին: Նատ մեծ կարևորություն ունեն այն տեղեկությունները, վորոնք համապատասխան հարցերի հետ առաջ են բերված նոտրագրուվ:

Հարցաթերթում յերկրաշարժի ույժի մասին հարց չկա: Հետաքրքրվողը կարող է այդ վորոշել թվանշաններով, դեկավարվելով Մերկալի-Կանկանիի 12 թվանշաննոց աստիճանացույցով, վոր ընդունել ե Վրաստանի Յերկրաբնաբանական Դիտարանը: Առաջ ե բերված նաև Կոետ-ի 5 թվանշաննոց աստիճանացույցը ստորերկրյա ձայները վորոշելու համար:

Պատահում են այնպիսի գեղքեր, վոր յերկրաշարժը մի քանի յերկրներում չե զգացվում, այն ինչ ամենամոտ հարեան յերկրում նա պարզ նկատվում ե: Դիտարանի համար համազոր կարևորություն ունի իմանալ թե այն յերկրներն, ուր տեղի ե ունեցել յերկրաշարժը և թե նըրանք, ուր յերկրաշարժ չե պատահել: Այե պատճառով յեթե հարեան վայրերում վորեւ յերկրաշարժ ե պատահում, իսկ դիտող—թղթակիցն իր ապրած քաղաքում, գյուղում, ավանում և գյուղաքաղաքում այդ չե զգում, հարցաթերթի բլանկում հարկավոր ե համապատասխան նիշումն անել:

Տեղեկություններով լցրած հարցաթերթերն անմիջա-

պես հանձնվում են փոստին առանց փոստային մարկա-
ների, փորովինեան նրանք՝ վորապես պետական առաքութ-
ներ, ուղարկվում են ձրի:

Հիմա անցնենք հարցաթերթով պահանջվող տեղեկու-
թյուններին առանձին-առանձին:

1. Յերկրաշարժը նկատվել ե

Այստեղ մանրամասն ցույց ե տրվում այն գավառը,
գյուղն, ավանը, գյուղաքաղաքն են, ուր դիտողն զգացել
ե յերկրաշարժը:

2. Շաբաթվա որը, ամսաթիվը, ամիսն ու տարին:
Ամսաթիվը ցույց ե տրվում բոլորի կողմից ընդունված
նոր տոմարով: Որինակ յերկուշաբթի 1925 թ. հունվ. 19-ին:

3. Յերկրաշարժը պատահեց կես որից առաջ, յետո
. ժամին բոպեին: Ժամանակը, փոր-
քան կարելի ե, պետք ե ճիշտ ցույց տալ: Առաջին հար-
վածն զգալուն պես պիտի նայել ժամացույցին և անմի-
ջապես նշանակել ժամն ու բոպեն: Որինակ. կեսորից առաջ
9 ժամ 25 բոպեին, կեսորից յետո 11 ժ. 14 ր.։ Կեսդի-
շերից մինչև կեսոր ժամանակը նշանակվում ե «կեսորից
առաջ» խոսքերով, իսկ կեսորից մինչև կեսգիշեր «կեսո-
րից յետո» խոսքերով: Անհրաժեշտ ե նշանակել, թե ինչ
ժամանակով ե հաշված՝ տեղական, յերկաթուղային,
փոստ-հեռագրատան թե մի այլ ժամանակով:

4. Յերբ և ինչպես ե ստուգիկել ժամացույցը: Ամեն
մի յերկրաշարժից յետո անհրաժեշտ ե ստուգել այն ժա-
մացույցը, փորով հարցաթերթում հաղորդվում ե յեր-
կրաշարժի ժամանակը: Ի հարկե ժամացույցը չպետք ե
ստուգել հարկանի կամ մասնավոր անձանց ժամացույց-
ներով: Յեթե մոտակայքում փոստ-հեռագրական գրա-
սենյակ կամ յերկաթուղային կայարան կա, այն ժամանակ
ժամացույցը պիտի ուղղել այդ հիմնարկություններում և
գրել, թե ձեր ժամացույցը յերկրաշարժը պատահած ը-
պ եին այդ հիմնարկությունների ժամացույցներից քանի
ուղե եր յետ կամ առաջ:

5. Յերկրաշարժի տեսակը (հարված կամ զետնի ալի-
քանման յերերում): Անհրաժեշտ ե ցույց տալ, թե յեր-
կրաշարժը քանի հարվածից եր բաղկացած. 1) մեկ հար-
վածից, 2) մի քանի առանձին հարվածներից (քանի). 3)
գետնի ալիքածե յերերումից և կամ 4) գետնի դողդո-
ղալուց:

6. Յեթե հարված ե յեղել, ցույց տալ նրա ուղղությու-
նը: Հարվածը կարող ե լինել ուղղահայաց (ցածից վերն)
կամ հորիզոնական (կողքահան): Վերջին դեպքում յերկրա-
շարժի ուղղությունը ցույց ե տրվում աշխարհի կողմերի
ուղղությամբ՝ հյուսիս, արևելք, հարավ, արևմուտք և
միջանկյալ ուղղություններով, որինակ՝ հարավ-արևմուտ-
քից դեպի հյուսիս-արևելք: Ուղղությունն իմացվում ե
կախված իրերի, որինակ լամպաների, ճոճկելուց, հեղուկ-
ների անոթների մեջ տարութերվելուց և չամրացրած ու
դյուրաշարժ առարկաների, որինակ սեղանների կամ
գլրոցների, վրա գրված անոթների տեղաշարժվելուց
կամ ընկնելուց:

7. Յերկրաշարժի տեսակը: Յերկրաշարժները
լինում են ակնթարթային և տեսական, Ակնթարթային յեր-
կրաշարժերի ժամանակ նկատվում են զորեղ հարված
կամ մեկմեկուց ընդմիջումներով բաժանված մի շարք հար-
վածներ: Ալիքածե շարժերի ժամանակ գետինը հանդարտ
յերերում ե առանց ուժեղ հարվածների: Այդպիսի դեպ-
քերում, ինչպես և գետնի դողդողալու ժամանակ, տես-
ղությունը ցույց ե տրվում վայրկեաններով:

8. Այս հարցում ընդհանրապես նշանակում ե տանից
գուրք՝ բացողյա, բակում, փողոցում, դաշտում են:

9. Այն շինությունը, փորի հատակը գետնի մակե-
րկույթից ցածը ե, կոչվում ե գետնահարկ. հետեւյալ հար-
կերը, ներքեկից վերև հաշվելով, կոչվում են՝ առաջին հարկ,
յերկրորդ հարկ են:

10 Յերկրաշարժն զգացվում ե զանազանակերպ, նա-
յած նրան, թե դիտողը հանդիսաւ դրության մեջ ե (հան-

պես հանձնվում են փոստին առանց փոստային մարկա-
ների, վորովճետև նրանք՝ վորպես պետական առաքույթ-
ներ, ուղարկվում են ձրի:

Հիմա անցնենք հարցաթերթով պահանջվող տեղեկու-
թյուններին առանձին-առանձին:

1. Յերկրաշարժը նկատվել ե

Այստեղ մանրամասն ցույց ե տրվում այն գավառը,
գյուղն, ավանը, գյուղաքաղաքն ևն, ուր դիտողն զգացել
ե յերկրաշարժը:

2. Եաբաթվա որը, ամսաթիվը, ամիսն ու տարին:
Ամսաթիվը ցույց ե տրվում բոլորի կողմից ընդունված
նոր տոմարով: Որինակ յերկուշաբթի 1925 թ. հունվ. 19-ին:

3. Յերկրաշարժը պատահեց կես որեց առաջ, յետո
. ժամին ըոպեին: Փամանակը, վոր-
քան կարելի ե, պետք ե ճիշտ ցույց տալ: Առաջին հար-
վածն զգալուն պես պիտի նայել ժամացույցին և անմի-
ջապես նշանակել ժամն ու ըոպեն: Որինակ. կեսորից առաջ
9 ժամ 25 ըոպեին, կեսորից յետո 11 ժ. 14 ր. Կեսորի-
շերից մինչև կեսոր ժամանակը նշանակվում ե «կեսորից
առաջ» խոսքերով, իսկ կեսորից մինչև կեսօրիշեր «կեսո-
րից յետո» խոսքերով: Անհրաժեշտ ե նշանակել, թե ինչ
ժամանակով ե հաշված՝ տեղական, յերկաթուղային,
փոստ-հեռագրատան թե մի այլ ժամանակով:

4. Յերբ և ինչպես ե ստուգվել ժամացույցը: Ամեն
մի յերկրաշարժից յետո անհրաժեշտ ե ստուգել այն ժա-
մացույցը, վորով հարցաթերթում հաղորդվում ե յեր-
կրաշարժի ժամանակը: Ի հարկե ժամացույցը չպետք ե
ստուգել հարեանի կամ մասնավոր անձանց ժամացույց-
ներով: Յեթե մոտակայքում փոստ-հեռագրական գրա-
սենյակ կամ յերկաթուղային կայարան կա, այն ժամանակ
ժամացույցը պիտի ուղղել այդ հիմնարկություններում և
գրել, թե ձեր ժամացույցը յերկրաշարժը պատահած ըո-
պեին այդ հիմնարկությունների ժամացույցներից քանի-
ըոպե եր յետ կամ առաջ:

5. Յերկրաշարժի տեսակը (հարված կամ զետնի ալի-
քանման յերերում): Անհրաժեշտ ե ցույց տալ, թե յեր-
կրաշարժը քանի հարվածից եր բաղկացած. 1) մեկ հար-
վածից, 2) մի քանի առանձին հարվածներից (քանի). 3)
զետնի ալիքածե յերերումից և կամ 4) զետնի գողտո-
ղալուց:

6. Յեթե հարված ե յեղել, ցույց տալ նրա ուղղությու-
նը: Հարվածը կարող ե լինել ուղղահայաց (ցածից վերև)
կամ հորիզոնական (կողքահան): Վերջին դեպքում յերկրա-
շարժի ուղղությունը ցույց ե տրվում աշխարհի կողմերի
ուղղությամբ՝ հյուսիս, արևելք, հարավ, արևմուտք և
միջանկյալ ուղղություններով, որինակ՝ հարավ-արևմուտ-
քից դեպի հյուսիս-արևելք: Ուղղությունն իմացվում ե
կախված իրերի, որինակ լամպաների, ճոճվելուց, հեղուկ-
ների անոթների մեջ տարութերվելուց և չամրացրած ու
դյուրաշարժ առարկաների, որինակ սեղանների կամ
գզրոցների, վրա դրված անոթների տեղաշարժվելուց
կամ ընկնելուց:

7. Յերկրաշարժի տեսողությունը: Յերկրաշարժները
լինում են ակնթարթային և տեսական, Ակնթարթային յեր-
կրաշարժերի ժամանակ նկատվում են զորեղ հարված
կամ մեկմեկուց ընդմիջումներով բաժանված մի շարք հար-
վածներ: Ալիքածե շարժերի ժամանակ գետինը հանդարտ
յերերում ե առանց ուժեղ հարվածների: Այդպիսի գետ-
քերում, ինչպես և զետնի գողդողալու ժամանակ, տեսո-
ղությունը ցույց ե տրվում վայրկեաններով:

8. Այս հարցում ընդհանրապես նշանակում ե տանից
դուրս բացողյա, բակում, փողոցում, գաշտում են:

9. Այն շինությունը, վորի հատակը զետնի մակե-
րեսույթից ցածը ե, կոչվում ե գետնահարկ. հետեւյալ հար-
կերը, ներքեւից վերև հաշվելով, կոչվում են՝ առաջին հարկ,
յերկրորդ հարկ են:

10 Յերկրաշարժն զգացվում ե զանազանակերպ, նա-
յած նրան, թե դիտողը հանգիստ գրության մեջ ե (հան-

կրաշարժի տեղ չեր ել ընդունվի, յեթե ուրիշները հաստատեին, թե իրենք ել են զգացել:

4. Զափավոր շարժ: Նկատել են փոշտոլորը: Շատերն զգացել են տանը, քչերը գետնահարկ շինություններում:

5. Զգ լի շարժ: Տներում նկատել են համարյա բոլորը: Քնածները զարթնել են, մի քանիսը վախեցել են, դռները ծածկվել են, զանգակներն զըգգնդացել. կախված առարկաները սաստիկ ճոճվել են, ժամացույցները (նրանց ճոճանակները) կանգնել:

6. Ուժեղ շարժ: Տներում նկատել են բոլորը, շատերը վախից գուրս են վագել փողոց: Տներում տապալվել են առարկաները, թափվել ե ծեփը: Տեղտեղ խախուտ տները վնասվել են:

7. Զափազանց ուժեղ շարժ: Տիրում ե ընդհանուր յերկյուղ և փախուստ տներից: Շարժը նկատվել ե նաև փողոցում: Աշտարակային զանգերը դողանջել են: Ծինեւլույզները քանդվել են, քիրամիդները թափվել: Շատ շինություններ թեթև կերպով վնասվել են,

8. Կործանիչ շարժ: Խուճապ ե տիրում: Մի քանի տներ կործանվել են մասնակի, իսկ մնացածները վնասվել են ընդհանրապես նշանավոր չափով: Մարդկային զոհեր չկան: Ցեղել են միայն մի քանի դժբաղդ դեպքեր:

9. Ավերիչ շարժ: Մի քանի տներ բոլորովին կամ համարյա բոլորովին կործանվել են, իսկ մնացածներից շատերն այնքան լուրջ են վնասվել, վոր նրանցում ապրելն անհնար ե: Մարդկային զոհերի թիֆս անհշան ե բընակավայրի զանազան տեղերում:

10. Վոչնչացնող շարժ: Խորտակված են բազմաթիվ շինություններ: Մարդկային զոհերի թիվը մեծ է: Գետնում առաջացել են ձեղեր, սարերից թափվել են դարափուլներ և անարահաները:

11. Փոթորկավից շարժ: Քարե շինությունները բոլորովին կործանվել են: Խորտակվել են հաստակառուց կամուրջների հենարահները, ծռվել են յերկաթե սյունե-

ըլ, պատառվել են ամբարտակները: Առաջացել ին լայն ճեղքեր, տեղի են ունեցել սույզերի և սարերից դարափուլներ թափվելու բազմաթիվ դեպքեր ևն:

12. Բացառիկ փոթորկավից շարժ: Քանդվել են մինչև անդամ ամենադիմացկուն, որինակ—փայտե տները: Ժայռոտ տեղերում (քարափներում) նկատվել են հորիզոնական և ուղղահայաց խոշոր փոփոխություններ. տեղի են ունեցել դարափուլներ թափվելու բազմաթիվ դեպքեր, ափերի մեծ տարածության վրա իջնելը ևն:

ԿԱՅԵՑՑԱՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԻ ԶԱՅՆԱԿԱՆ ԵԵՐԵՎՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

1. Զափազանց թույլ ձայն: Նա հաղիվ ե լսվում բաց ողում կատարյալ լուսության մեջ, իսկ փակ շինության մեջ չե լսվում: Ականջը գեսնին դնելիս լսվում ե թեթև քամու ձայն, ինչպես թույլ ճայթյուն կամ վորոտի շատ հեռավոր արձագանք:

2. Թույլ ձայն: Բացողյա նա լսվում ե պարզ, իսկ սենյակում հաղիվ ե լսվում: Զայնը նման ե՝ խուլ հարվածի կամ հեռավոր արձագանքի, անձրկի թափվելուն, շորի ճղվելուն, ամանեղենի կոտրատվելուն:

3. Զափավոր ձայն: Պարզ լսվում ե սենյակում: Զայնը նման ե միջակ վորոտի, ալիքների ծփանքի, ծառերի սոսափյունի, սաստիկ քամու ժամանակ ծինելույզում առաջացած գվազոցի, մեքենաների շարժվելուց ծագած բվրվոցի, գերանների ճոճուցի, հեռավոր պայթյունների, ձեռքի ուումբի պայթելուն:

4. Ուժեղ ձայն: Նման ե ուժեղ վորոտի, ծովի ալեկոնդության, լավայի հոսելուն, պատի փլելուն. տեղատարափ անձրեի կամ կարկուտի թափվելուն, գերանների կոտրվելուն, ծանր առարկայի ընկնելուն, թնդանոթագության: Ձայնն առաջացնում ե յերկյուղ:

5. Շատ ուժեղ ձայն: Նման ե ուժեղ վորոտի, կայծակի հարվածելուն, ծովի ուժեղ լափին տալուն, ժայռերի փլելու, փոթորիկի, զոգեկաթսայի բռոկ փւելուն, ծանրարկի (շարադա) հարվածի, ուժեղ պայթյունի։ Ազգաբնակության մեջ առաջանում ե ընդհանուր վախ։



2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0069303

3P
4868

